ՀԽՍՀ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ (1940—1960)

Հ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ժողովրդի նյութական բարեկեցության մակարդակի սիստեմատիկ բարձրացումը, նրա ամենօրյա հարաճուն կարիքների բավարարումը սոցիալիստական հասարակարգի բնորոշ գիծն է։ «Միայն սոցիալիզմը,— նշել է Վ. Ի. Լենինը,— հնարավորություն կտա... բոլոր աշխատավորների կյանքը դարձնել առավել հեշտ և նրանց բարեկեցության հնարավորություն ընձեռող»[1]։ Խորհրդային մարդկանց կենսամակարդակի բարձրացման խնդիրը միշտ եղել և մնում է կոմունիստական կուսակցության ու խորհրդային պետության սոցիալական քաղաքականության գլխավոր իմաստն ու նպատակը։ Ինչպես ասված է ԽՄԿԿ XXVII համագումարի նյութերում, «Կուսակցության ուշադրության կենտրոնում միշտ եղել են սոցիալական քաղաքականության հարցերը, մարդու նկատմամբ հոգատարությունը»[2]։

Քննվող ժամանակաշրջանում հասարակական արտադրության բուռն վերելքը և նրա արդյունավետության բարձրացումը վճռական ազդեցություն ունեցան խորհրդային ժողովրդի կյանքի ու բարեկեցության վրա, թույլ տվեցին լուծելու սոցիալական լուրջ պրոբլեմներ։ Կոմունիստական կուսակցությունը և խորհրդային կառավարությունն այդ ուղղությամբ իրականացրին մի շարք միջոցառումներ։ Ուշագրավ են հատկապես աշխատաժամանակի կրճատման, լայն սպառման ապրանքների մասնայական արտադրության և ապրանքաշրջանառության ծավալի մեծացման, ապրանքների գների իջեցման, աշխատավորների միջին աշխատավարձի բարձրացման, նրանց ռեալ եկամուտների ավելացման, կուլտուր-կենցաղային և այլն պայմանների բարելավման հետ կապված ձեռնարկումները։

Արդյունաբերության, գյուղատնտեսության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի բուռն զարգացման հիման վրա արագորեն աճեց ազգային եկամուտը (1960 թ. 335 %-ով համադրելի գներով գերազանցեց 1940 թ. մակարդակը)[3], որը հնարավորություն տվեց ավելացնել ժողովրդի բարեկեցության բարձրացման նպատակին ուղղված հատկացումները։

Բնակչության կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ այդ տարիներին զգալի հաջողություններ ձեռք բերվեցին նաև խորհրդային Հայաստանում։ Նկատելիորեն ավելացավ ՀԽՍՀ բանվոր-ծառայողների աշխատավարձի ֆոնդը[4], որը ըստ տարիների հետևյալ պատկերն է ներկայացնում. 1950 թ. այն 1940 թ. համեմատությամբ աճել է 177 %-ով, 1945 թ. համեմատությամբ՝ 130,6 %-ով, 1960 թ. 1955 թ. համեմատությամբ՝ 155,5 %-

---

[1] *Վ. Ի. Լենին, Երկ, հ. 36, էջ 467։*

[2] *ՍՄԿԿ XXVII համագումարի նյութերը, Երևան, 1985, էջ 61։*

[3] Народное хозяйство СССР в 1922—1972. Юбилейный статистический ежегодник, М., 1972, с. 359.

[4] *Արդյունաբերության վերակառուցումը, գյուղատնտեսության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի հաջողությունները պայմաններ ստեղծեցին 1947 թ. դեկտեմբերին կատարելու դրամական ռեֆորմ, որով վերացվեցին պատերազմի հետևանքները դրամական շրջանառության ասպարեզում, ամրապնդվեց ռուբլին։*

ով[5]։ Համանման միտում է դիտվել նաև Միության մեջ։ Նշված ֆոնդի վերընթաց փոփոխությունները նպաստեցին բանվոր-ծառայողների աշխատավարձի բարձրացմանը։ Կտրուկ բարձրացավ արդյունաբերության մեջ զբաղված աշխատողների աշխատավարձը։ Այսպես, եթե 1940—1960 թթ. ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության մեջ ընդգրկված աշխատողների աշխատավարձը բարձրացել է 2,1 անգամ, ապա արդյունաբերության մեջ՝ շուրջ 2,6 անգամ, միջին հաշվով արդյունաբերական ինժեներատեխնիկական անձնակազմինը՝ 1,9, արդյունաբերական բանվորներինը՝ 2,6, ծառայողներինը՝ 1,8 անգամ։ Ինչպես տեսնում ենք, բանվորների աշխատավարձն ավելի արագ է բարձրացել, քան ինժեներատեխնիկական աշխատողներինը և ծառայողներինը։ Դրա հետևանքով, եթե 1940 թ. արդյունաբերության մեջ զբաղված բանվորների աշխատավարձը կազմում էր արդյունաբերական ինժեներատեխնիկական անձնակազմի աշխատավարձի մոտ 50 %-ը, ապա 1960 թ.՝ 68 %-ը[6]։ ՀԽՍՀ բանվորների աշխատավարձի աճի տեմպերը հատկապես բարձր են եղել արդյունաբերության առաջատար մի շարք ճյուղերում։ Օրինակ, 1950—1960 թթ. հանրապետության արդյունաբերության մեջ բանվոր-ծառայողների միջին ամսական աշխատավարձը բարձրացել է 1,1 անգամ, իսկ մեքենաշինության մետաղամշակման և շինանյութերի արդյունաբերության աշխատողներինը՝ համապատասխանաբար՝ 1,4 և 1,8 անգամ[7]։ Աշխատավարձի բարձրացման ցածր տեմպեր դիտվել են սպասարկման բնագավառում և գյուղատնտեսության մեջ։ Օրինակ, 1960 թ. կապի, կոմունալ կենցաղային սպասարկման, հասարակական սննդի և նյութատեխնիկական մատակարարման բանվոր-ծառայողների միջին ամսական աշխատավարձը համապատասխանաբար կազմում էր արդյունաբերության մեջ զբաղված բանվոր-ծառայողների աշխատավարձի 73,1, 63,4 և 67 %-ը, իսկ գյուղատնտեսական բանվորների աշխատավարձը՝ 58,5 %-ը[8]։

Ցնայած ագրարային բանվորների ամենամսյա աշխատավարձը զգալիորեն ցածր էր բանվորների մյուս ջոկատների աշխատավարձից, այնուհանդերձ, աստիճանաբար կրճատվում էին այդ տարբերության սահմանները։ Դա բացատրվում է նրանով, որ գյուղատնտեսական բանվորների աշխատավարձն ավելի արագ էր բարձրանում, քան արդյունաբերական բանվորներինը և ինժեներատեխնիկական անձնակազմինը։

Արագորեն աճեցին բանվորների ռեալ եկամուտները։ Այդ գործում մեծ նշանակություն ունեցան խորհրդային պետության նոր ձեռնարկումները գների իջեցման բնագավառում։ Հետպատերազմյան տարիներին մի քանի անգամ կատարվեց մասսայական սպառման ապրանքների մանրածախ գների իջեցում, որի շնորհիվ ՀԽՍՀ աշխատավորների շահույթը 1950 թ. գների համեմատությամբ 1955 թ. կազմեց մոտ 1 միլիարդ 230 մլն ռուբլի[9], իսկ 1955—1958 թթ. միայն դրամական եկամուտն աճեց 35 %-ով[10]։ Բանվոր-

---

5 Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ/բ/Պ 15-րդ համագումարում ՀԿ/բ/Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, Երևան, 1951, էջ 12, Սովետական Հայաստան, 21.III. 1951, 9.I.1960, ՀԽՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀԽՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 163, ց. 21, դ. 851, թ. 7։

6 Հաշվարկը կատարվել է ըստ Народное хозяйство Армянской ССР в 1983 г. Статистический ежегодник (Ереван, 1984) ժողովածուի 180-րդ էջի աղյուսակի տվյալների։

7 Հաշվարկը կատարվել է Труд в Армянской ССР (Ереван, 1970) ժողովածուի 71—74-րդ էջերի աղյուսակների տվյալների հիման վրա։

8 Հաշվարկը կատարվել է ըստ Народное хозяйство Армянской ССР в 1983 г. ժողովածուի 180-րդ էջի աղյուսակի տվյալների։

9 Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ/բ/Պ 16-րդ համագումարում ՀԿ/բ/Պ Կենտկոմի աշխատանքի մասին, Երևան, 1952, էջ 68։

10 ՀԽՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 709, ց. 2, դ. 670, թ. 35։

ծառայողների ռեալ եկամուտների աճին մեծապես նպաստեց բնակչությունից գանձվող հարկերի կրճատումը։ Եթե 1940 թ. բնակչությունից գանձվող հարկերը կազմում էին հանրապետության պետական բյուջեի 9,2 %-ը, ապա 1960 թ.՝ 5,5 %-ը[11]։

Պետական փոխառության բաժնեգրության շարունակաբար կրճատումները զգալի չափով բարձրացրին ժողովրդի նյութական բարեկեցության մակարդակը։ Հայտնի է, որ ինչպես սոցիալիստական շինարարության նախորդ տարիներին, այնպես էլ ուսումնասիրվող ժամանակաշրջանում անց էր կացվում պետական փոխառության բաժնեգրում։ Ստացված դրամական միջոցները, որպես լրացուցիչ աղբյուր, ներդրվում էին ժողովրդական տնտեսության մեջ։ Սակայն սոցիալիստական արտադրության զարգացման և դրա նյութատեխնիկական բազայի ամրապնդման շնորհիվ փոխառության բաժնեգրումն աստիճանաբար կորցրեց իր կարևորությունը և 1958 թ. նրա թողարկումը դադարեցվեց։

Բանվոր-ծառայողների եկամուտների ընդհանուր հաշվեկշռի մեջ շարունակում էր մեծանալ հասարակական ֆոնդերից ստացվող համալրումների բաժինը։ Այդ ֆոնդերից հանրապետության բնակչությանը տրվող վճարումներն ու արտոնությունները 1960 թ. կազմեցին 342,0 մլն ռուբլի, իսկ յուրաքանչյուր բնակչի հաշվով՝ 155 ռուբլի[12]։ Հատկացումների մեծ մասը բաժին էր ընկնում սոցիալ-կուլտուրական ձեռնարկումներին։ Այսպես, 1960 թ. ՀԽՍՀ պետական բյուջեի ծախսերից, որը կազմել է 352,1 մլն ռուբլի (1940 թ. եղել է 49,9 մլն ռուբլի), սոցիալ-կուլտուրական միջոցառումների համար ներդրվել է 164,7 մլն ռուբլի, այսինքն՝ բյուջեի մոտ 47 %-ը։ Այս գումարն ավելի քան 5 անգամ գերազանցում էր նույն նպատակի համար 1940 թ. ծախսերը[13]։

Բանվորների կենսամակարդակի բարձրացման գործում մեծ էր թոշակների նշանակությունը։ Երկրի սոցիալ-տնտեսական զարգացումն ու դրա հետ կապված ազգային եկամտի աճը կոմունիստական կուսակցությանը և խորհրդային պետությանը հնարավորություն տվեցին մի շարք որոշումներ ընդունել աշխատավորների թոշակը բարձրացնելու ուղղությամբ։ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը 1956 թ. հուլիսի 14-ին օրենք ընդունեց թոշակավորման ֆոնդն ավելացնելու մասին։ Ծերության, պատերազմի և աշխատանքի հաշմանդամների համար սահմանվեցին թոշակի համապատասխան չափեր։ Նոր օրենքը ծերության համար սահմանեց ամսական նվազագույն կենսաթոշակ՝ մինչև 30 ռուբլի։ Դա կարևոր նշանակություն ուներ հատկապես այն կենսաթոշակառուների համար, որոնք կենսաթոշակի էին անցել վաղուց, երբ դեռ բավականին ցածր էր աշխատողների աշխատավարձը։ Պետական թոշակի մասին նոր օրենքը զգալիորեն ամրապնդեց նաև պատերազմի ու աշխատանքի հաշմանդամների նյութական դրությունն ու կենցաղային պայմանները։ Նոր կարգի համաձայն հաշմանդամների թոշակի չափը սահմանելիս հաշվի էին առնում աշխատանքի բնույթը, պայմանները և հաշմանդամության առաջացման պատճառը։ Պետական թոշակների վճարման նոր օրենքին անցնելու շնորհիվ արդեն 1960-ական թվականների սկզբին երկրում ծերության թոշակի չափն աճեց ավելի քան 2, իսկ հաշմանդամներինը՝ 1,5 անգամ[14]։ Ավելացան բազմազավակ և միայնակ մայրերին տրվող հատկացումները։ Բավական է նշել, որ միայն 1960 թ. բազմազավակ և միայնակ մայրերին պետությունը վճարեց 7,3 մլն ռուբլի նպաստ[15]։

Բանվոր-ծառայողների կենսամակարդակի բարձրացման մասին է խո-

---

11 Народное хозяйство Армянской ССР в 1983 г., с. 289.

12 Նույն տեղում, էջ 195։

13 Նույն տեղում, էջ 288—289։

14 История СССР, т. 11, М., 1980, с. 626.

15 Народное хозяйство Армянской ССР в 1983 г., с. 288.

սում նաև կուտակման համար կատարվող հատկացումների անընդմեջ աճը։ Բնակչության դրամական եկամուտների աճի շնորհիվ ավելացան հանրապետության բանվորների, ծառայողների և կոլտնտեսականների ավանդները խնայողական դրամարկղներում՝ 1960 թ. կազմելով 81 մլն ռուբլի։ Դա քիչ եկամուտ չէր, եթե հաշվի առնենք, որ 1940 թ. այն եղել է 3 մլն ռուբլի[16]։ Սոցիալիստական արտադրության վերելքի հիման վրա տարեցտարի աճում էր ժողովրդական սպառման ծավալը և ավելանում բնակչության ծախսերը։ Այսպես, 1955 թ. համեմատությամբ 1958 թ. ՀԽՍՀ բնակչությունը պետական և կոոպերատիվ առևտրի ցանցից 42 %-ով ավել ապրանք գնեց[17], իսկ 1958 թ. համեմատությամբ 1960 թ. հանրապետության բնակչության սպառած ապրանքների գումարն ավելացավ 86 մլն ռուբլով[18]։ Այլ կերպ ասած, մեծացավ պետական ու կոոպերտիվ առևտրի մանրածախ ապրանքաշրջանառությունը, որի ծավալը 1960 թ. հասավ 519,9 մլն ռուբլու, 1940 թ. 109,4 մլն ռուբլու դիմաց։ Զգալիորեն աճեց ապրանքաշրջանառության ծավալը նաև բնակչության մեկ շնչի հաշվով և 1960 թ. կազմեց 280 ռուբլի[19]։ Պետական ու կոոպերատիվ առևտրի սիստեմները, ներառյալ և հասարակական սնունդը, 1940 թ. համեմատությամբ 1960 թ. բնակչությանը միս և մսեղեն վաճառել են 10,7, ձուկ և ձկնեղեն՝ 1,8, կենդանական յուղ՝ 35,4, պանիր՝ 8, ալյուր, հաց և հացաբուլկեղեն՝ 1,7, կարտոֆիլ՝ 14,6 անգամ ավելի։ Մեծ չափով ընդլայնվեց նաև ոչ արդյունաբերական ապրանքների շրջանառության ծավալը։ Նշված տարիներին հանրապետությունում բամբակե գործվածքների վաճառքն ավելացել է 2,5, մետաքսյա գործվածքներինը՝ 8,8, բրդյա գործվածքներինը՝ 5,5, տրիկոտաժեղենինը՝ 3,8, կահույքինը՝ 3,7 անգամ և այլն[20]։ Ապրանքաշրջանառության աճը մի կողմից բնակչության գնողականության բարձրացման, իսկ մյուս կողմից՝ հասարակության առաջընթացի, հասարակական արտադրության զարգացման արտահայտությունն է։ Քննվող ժամանակաշրջանում նկատելիորեն բարելավվեց առևտրի նյութատեխնիկական բազան, ընդարձակվեց խանութների ու ճաշարանների ցանցը, արմատավորվեցին սառնարանային սարքավորումների նոր տեսակներ։ Չնայած մանրածախ ապրանքաշրջանառության մեծ ծավալներին, այնուհանդերձ, բնակչության անընդհատ աճող պահանջմունքներն արդյունաբերական ու պարենային շատ ապրանքների գծով չէին բավարարվում։ Պահանջարկն առաջ էր անցել առաջարկից։ Դեռ չէին հարթվել գյուղի և քաղաքի ապրանքաշրջանառության մակարդակների միջև եղած տարբերությունները։ Բավական է նշել, որ 1960 թ. քաղաքային բնակավայրերում մանրածախ ապրանքաշրջանառության բաժինը 4 անգամ բարձր էր գյուղական շրջաններից[21]։

Բանվոր-ծառայողների կենցաղային պայմանների բարելավման համար կարևոր նշանակություն ունեցավ նշված ժամանակաշրջանում հանրապետությունում բնակարանային շինարարության ծավալումը։ Այդ ուղղությամբ կատարված ներդրումներն արագորեն աճեցին հատկապես 1950-ական թվականների երկրորդ կեսից՝ կապված ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1957 թ. հուլիսի 31-ի «ԽՍՀՄ-ում բնակարանային շինարարությունը զարգացնելու մասին»[22] որոշման հետ։ Խորհրդային Հայաստանում եթե

---

16 Նույն տեղում, էջ 216։

17 ՀԽՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 709, ց. 2, գ. 670, թ. 34—35։

18 Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի 22-րդ համագումարին, Երևան, 1961, էջ 64։

19 Народное хозяйство Армянской ССР в 1983 г., с. 223—224.

20 Նույն տեղում, էջ 211։

21 Народное хозяйство Армянской ССР в 1977 году. Статистический ежегодник, Ереван, 1988, с. 192.

22 ՀԽՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 219, ց. 10, գ. 2, թ. 4—5։

բնաբառանային շինարարության մեջ փաստացի կատարված կապիտալ ներդրումների միջին տարեկան գումարը 1946—1950 թթ. կազմել է 81 մլն ռուբլի, 1951—1955 թթ.՝ մոտ 121 մլն ռուբլի, 1956 թ.՝ 180 մլն ռուբլի, ապա 1957 թ. այն կազմեց արդեն 256 մլն ռուբլի, 1958 թ.՝ 332 մլն ռուբլի, իսկ 1960 թ.՝ 374 մլն ռուբլի[23]։ 1940—1960 թթ. պետական և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից կառուցվեց ու շահագործման հանձնվեց 2823 հազար քառ. մ. բնակելի տարածություն[24]։ Պետական բնակարանային ֆոնդի բնակելի մակերեսը (միայն քաղաքներում և քաղաքատիպ ավաններում) 1960 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմեց 1841 հազար քառ. մ.[25]։ Դրա հետ մեկտեղ, պետական վարկի օգնությամբ և անձնական խնայողությունների հաշվին 1938 թ. մինչև 1959 թ. ներառյալ ՀԽՍՀ քաղաքներում և քաղաքատիպ ավաններում կառուցվեց ու շահագործման հանձնվեց 2201 հազար քառ. մ. բնակելի տարածություն[26]։

Բնակչության կենսագործունեության, գյուղի և քաղաքի կենսամակարդակների միջև եղած էական տարբերությունների վերացման ուղղությամբ մեծ դեր խաղաց առողջապահության զարգացումը։ Զգալի չափով ընդարձակվեց բժշկական հիմնարկների ցանցը, հարստացավ դրանց նյութատեխնիկական բազան և ավելացավ բժիշկների ու բուժական միջին անձնակազմի թիվը։ Արդեն 1960 թ. ՀԽՍՀ-ում գործում էին 269 բուժհիմնարկներ 13170 մահճակալով, որտեղ աշխատում էին 4571 բժիշկ և 11335 բժշկական միջին անձնակազմ։ Դա նշանակում է, որ 1940 թ. համեմատությամբ 1960 թ. բուժհիմնարկների, բժիշկների և միջին բուժանձնակազմի թիվը համապատասխանաբար ավելացել է 2,8, 4,5 և 4,8 անգամ, իսկ մահճակալներինը՝ 3,2 անգամ[27]։ Նկատելիորեն աճեցին հատկացումներն առողջապահության կարիքների համար։ ՀԽՍՀ-ում այդ նպատակի համար հատկացումները 1946 թ. դիմաց 1955 թ. ավելացան 74 %-ով[28]։ Համեմատության համար նշենք, որ եթե ցարիզմի օրոք Հայաստանի բնակչության մեկ շնչի հաշվով բժշկական սպասարկման ծախսերը կազմում էին ընդամենը 25 կոպեկ, ապա 1940 թ.՝ 56 ռուբ. 76 կոպ., 1946 թ.՝ 74 ռուբ. 63 կոպ., 1955 թ. 130 ռուբ.[29]։ Հետագա տարիներին ևս այդ նպատակի համար հատկացված ծախսերը մշտապես ավելացել են։ Արդեն 1960 թ. առողջապահության (ներառյալ նաև ֆիզիկական կուլտուրան) զարգացման համար հատկացվեց 33,1 մլն ռուբլի, այսինքն՝ մոտ 6 անգամ ավելի, քան 1940 թ.[30]։

Մեծապես ընդլայնվեց առողջարանների և հանգստյան տների ցանցը. 1939 թ. 4 առողջարանի փոխարեն 1960 թ. հանրապետությունում գործում էր 21 առողջարան։ Մահճակալների թիվն առողջարաններում և հանգստյան տներում 1939 թ. եղել է 1900, իսկ 1960 թ.՝ 4085[31]։ Ժողովրդի բարեկեցության բարձրացման և բուժսպասարկման բարելավման հետ սերտորեն կապված՝ ՀԽՍՀ-ում պակասեցին հիվանդությունները, նվազեց բնակչության, հատկապես երեխաների մահացությունը և նկատելիորեն բարձրացավ ծնելիության գործակիցը։ 1960 թ. տվյալներով Խորհրդային Հայաստանում ծը-

---

23 Նույն տեղում։

24 Народное хозяйство Армянской ССР за 60 лет. Юбилейный статистический сборник, Ереван, 1986, с. 204.

25 ՀԽՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 219, ց. 10, գ. 3, թ. 13։

26 Նույն տեղում, թ. 21—22։

27 Народное хозяйство Армянской ССР в 1983 г., с. 271.

28 ՀԽՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 709, ց. 2, գ. 503, թ. 14։

29 Նույն տեղում։

30 Экономика и культура Армении к 50-летию Великого Октября. Статистический сборник, Ереван, 1967, с. 368.

31 Նույն տեղում։

նունդը 1000 բնակչի հաշվով կազմեց 40,2 մարդ[32]։ Դա սոցիալական բնագավառում հանրապետության մեծագույն ձեռքբերումներից էր։

Ընդլայնվեց նաև նախադպրոցական մանկական հիմնարկների ցանցը։ 1960 թ. ՀԽՍՀ-ում այդ հիմնարկների թիվը հասավ 416-ի (29830 տեղով)՝ 1940 թ. 286-ի դիմաց (14530 տեղով)[33]։ Հիշյալ հիմնարկների ցանցի ընդլայնումը նույնպես նպաստեց ինչպես ամբողջ բնակչության, այնպես էլ բանվոր դասակարգի նյութական-կենցաղային մակարդակի բարձրացմանը։ Բանվոր-ծառայողների կենսամակարդակի բարձրացման բնագավառում շոշափելի դեր կատարեցին կոմունալ-կենցաղային ծառայության օբյեկտների ընդլայնումը և զարգացումը։ Դա ինքնին հասկանալի է։ Սիստեմատիկաբար մեծանում էին բնակչության ավելի լավ հագնվելու, կոմունալ-կենցաղային ծառայություններից մեծ չափով օգտվելու պահանջներն ու հնարավորությունները։ Մեծապես բարձրացավ բնակչության սպասարկման մակարդակը կոմունալ բաղնիքների գծով։ ՀԽՍՀ-ում, եթե 1940 թ. հաշվվում էր 38 կոմունալ բաղնիք՝ 1545 տեղ միաժամանակյա տարողությամբ, ապա 1960 թ. այդ թիվը հասավ 56-ի՝ 2304 տեղ միաժամանակյա տարողությամբ[34]։ Դրական տեղաշարժեր կատարվեցին կենցաղսպասարկման օբյեկտներից լվացքատների աշխատանքում։ Արդեն 1959 թ. Հայաստանում գործում էր 9 լվացքատուն, որոնց թողարկման ընդհանուր կարողությունը մեկ հերթափոխում կազմում էր 3750 կգ չոր սպիտակեղեն, որը 1940 թ. համեմատությամբ ավել էր 4 անգամ[35]։ Նկատելիորեն ընդլայնվեց հյուրանոցների ցանցը։ Եթե 1939 թ. հանրապետությունում կար 34 հյուրանոց՝ 1225 մահճակալով, ապա 1960 թ. հունվարի 1-ի դրությամբ այն կազմեց համապատասխանաբար 37 և 2059[36]։

Բնակչության կենցաղում արմատավորվեցին ծառայությունների այնպիսի ձևեր, ինչպիսիք են վարսավիրանոցը, կոշիկի, հագուստի և կենցաղային զանազան ապրանքների պատրաստման ու նորոգման օբյեկտները և այլն։ Բազմաթիվ շրջկենտրոններում, քաղաքատիպ ավաններում և գյուղերում կառուցվեցին ակումբներ, գրադարաններ, ընդարձակվեց ռադիոցանցը, դրվեցին մշտական կինոսարքավորումներ։ Ընդլայնվեց հեռախոսային կապը քաղաքներում, շրջաններում և գյուղական վայրերում։ Բանվոր-ծառայողների կենսամակարդակի բարձրացման մասին է վկայում նաև 1950-ական թվականների վերջերին կենցաղում գազի կիրառություն գտնելու փաստը։ Մինչև Ղաբադաղ-Աղստաֆա-Երևան գազամուղի ավարտումը և բնական գազի ստացումը, Երևանում 1958 թ. կեսերից ձեռնարկվեց բնակչությանը բալոններով բերվող հեղուկ գազի մատակարարումը՝ խոհանոցային կարիքների համար։ Նույն տարում Երևանի մի շարք բնակելի շենքերում տեղադրվեցին այդ գազի օգտագործման 586 սալօջախներ։ 1959 թ. այդ աշխատանքները շարունակվեցին ավելի մեծ թափով և տեղադրվեց ևս 3136 սալօջախ[37]։ 1960 թ. ՀԽՍՀ-ում բնական գազը մուտք գործեց կենցաղ։ Տարեվերջին հանրապետությունում բնական գազով գազիֆիկացվեց 3500, իսկ հեղուկ գազով՝ ևս 24 հազար բնակարան[38]։ Կենցաղում նկատելիորեն ավելացան տնտեսական ու տնային գործածության առարկաների՝ ռադիոընդունիչների, հեռուստացույցների, լվացքի ու կարի մեքենաների թիվը։ Օրինակ, եթե 1955 թ. ՀԽՍՀ

---

32 ՀԽՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 163, ց. 39, գ. 276, թ. 2։

33 Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, с. 369.

34 ՀԽՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 219, ց. 10, գ. 2, թ. 12, գ. 4, թ. 56—57։

35 Նույն տեղում, ց. 2, գ. 2, թ. 44։

36 Նույն տեղում, ց. 10, գ. 2, թ. 37, գ. 4, թ. 25—26։

37 Նույն տեղում, գ. 4, թ. 52—53։

38 Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետու զեկուցումը Հայաստանի կոմպարտիայի 22-րդ համագումարին, էջ 66։

բնակչության կողմից գնվել էր 22,4 հազար ռադիոընդունիչ, ապա 1960 թ.՝ 32,6 հազար։ Նույն ժամանակամիջոցում սառնարաններինը՝ 1,4 հազարից հասավ 9,1 հազարի, իսկ կարի մեքենաներինը՝ համապատասխանաբար 1,9 և 17,7 հազար։ 1958 թ. դիմաց 1960 թ. Հայաստանում վաճառված հեռուստացույցների թիվն ավելացավ ավելի քան 2 անգամ և հասավ 18,1 հազարի[39]։ Նշված ապրանքների նկատմամբ բնակչության սպառողական պահանջների սիստեմատիկ մեծացման հետ կապված կենցաղում լայն կիրառություն գտավ էլեկտրաէներգիան։ 1960 թ. Հայաստանում այդ նպատակի համար օգտագործվել է 154 մլն 300 հազար կվ/ժ էլեկտրաէներգիա՝ 1933 թ. 8 մլն 300 հազար կվ/ժ դիմաց։ Այդ կարիքների համար բացթողված էլեկտրաէներգիայի քանակը Երևան քաղաքում 1959 թ. կազմել է 75944 հազար կվ/ժ՝ 1939 թ. 18176 հազար կվ/ժ դիմաց[40]։

Նկատելի տեղաշարժեր կատարվեցին նաև ջրամատակարարման բնագավառում։ 1959 թ. հանրապետության ջրմուղները միասին վերցրած (ավելի քան 760 կմ ընդհանուր երկարությամբ) ցանցերին միջին հաշվով օրական տվել են 198 հազար խոր. մ. ջուր[41]։ Նոր զարգացում ապրեց քաղաքային տրանսպորտը։ Անցկացվեցին տրոլեյբուսի նոր գծեր և ստեղծվեցին ավտոբուսի ու տրամվայի նոր երթուղիներ[42]։ Արդեն 1960 թ. հունվարի 1-ի դրությամբ Երևանի տրամվայի և տրոլեյբուսի գծերի ընդհանուր երկարությունը հասնում էր 121 կմ-ի, իսկ դրանցով օրական փոխադրվում էր միջին հաշվով 270 հազար ուղևոր, որը մոտ 9 անգամ գերազանցում էր Երևան քաղաքի 1920 թ. բնակչության թիվը[43]։ Զգալի աշխատանքներ կատարվեցին քաղաքների, բանվորական ավանների և գյուղական շրջկենտրոնների բարեկարգման ուղղությամբ։ Բավական է նշել, որ 1955—1959 թթ. հանրապետությունում բարեկարգման աշխատանքների համար ներդրվել է 239 մլն 500 հազար ռուբլի, որից 161 մլն 300 հազար ռուբլին Երևան քաղաքի համար[44]։ Ասենք նաև, որ միայն տեղական խորհուրդների տնօրինության տակ գտնվող բնակելի տների հիմնական վերանորոգումների և դրանց բարեկարգման համար 1960 թ. բյուջեով նախատեսված էր մոտ 25 մլն ռուբլի, որը այդ նույն նպատակի համար 1950 թ. առանձնացված միջոցները գերազանցում էր ավելի քան 4 անգամ[45]։

Անշուշտ, տրանսպորտի աշխատանքների սիստեմատիկ բարելավումը և բնակավայրերի բարեկարգումը ևս նպաստավոր պայմաններ էին ստեղծում աշխատավորների պահանջմունքներն ավելի լավ բավարարելու, նրանց կյանքը ավելի բարեկեցիկ դարձնելու համար։ Իսկ այդ ուղղությամբ կատարված ծավալուն աշխատանքներն ակնառու կերպով վկայում են ժողովրդի բարեկեցության բարձրացման, նրանց հարաճուն պահանջմունքների բավարարման նկատմամբ կուսակցության և կառավարության անդուլ հոգատարության մասին։ Չնայած այդ հաջողություններին, այնուհանդերձ, քննվող ժամանակաշրջանում խորհրդային ժողովրդի նյութական բարեկեցության բարձրացման հետ կապված՝ դեռևս կային լուծված շատ հարցեր ու պրոբլեմներ։ Արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը չէին ապահովում իրենց առջև դրված խնդիրների կատարումը, որի հետևանքով շարունակում էր ցածր մնալ

---

39 Советская Армения за 40 лет, Ереван, 1970, с. 198; Экономика и культура Армении к 50-летию Великого Октября, с. 288.

40 ՀԱՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 219, ց. 10, գ. 2, թ. 39։

41 Նույն տեղում, թ. 40։

42 1933 թ. հունվարից Երևանում աշխատել սկսեց տրամվայը, որն այն ժամանակ ուներ միայն 15 կմ երկարությամբ գիծ։ 1949 թ. կեսերից սկիզբ դրվեց նաև տրոլեյբուսային երթևեկությանը (Նույն տեղում, թ. 12)։

43 Նույն տեղում, թ. 12, 40։

44 Նույն տեղում, ց. 10, գ. 3, թ. 22։

45 Նույն տեղում, գ. 2, թ. 36։

պարենային ու արդյունաբերական ապրանքների սպառման ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով։ Զգացվում էր բնակարանների խիստ պակաս, ցածր էր բնակչության բժշկական սպասարկման մակարդակը։ Ոչ քաղաքային վայրերում, մասամբ նաև փոքր քաղաքներում քիչ էին կամ գրեթե բացակայում էին կենցաղսպասարկման հիմնարկները։ Արմատական կատարելագործման կարիք ունեին բնակչության կուլտուր-կենցաղային պահանջմունքները բավարարող հիմնարկների սպասարկման ձևերն ու մեթոդները։ Թերություններ կային նաև ակումբների, գրադարանների և մշակույթի մյուս օջախների գործունեության մեջ։ Ոչ քաղաքային վայրերում մշակույթի օջախների զգալի մասը գործում էր անհարմարավետ շենքերում, չուներ անհրաժեշտ նյութա-տեխնիկական բազա և որակյալ կադրեր։

Ընդհանրացնենք։ Ուսումնասիրվող ժամանակաշրջանում կուսակցության նպատակաուղղված սոցիալական քաղաքականության շնորհիվ նկատելիորեն բարձրացավ բանվոր դասակարգի, ինչպես նաև ամբողջ բնակչության կենսամակարդակը։ Միաժամանակ, բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և մտավորականությունը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, հետագա տարիներին ևս լուրջ միջոցառումներ պետք է իրականացնեին՝ սոցիալիստական արտադրության դինամիկ զարգացման, արտադրվող արդյունքների տեսականու մշտական նորացման, որակի բարձրացման և կենցաղային ծառայությունների զարգացման հիման վրա բարձրացնելու բնակչության նյութական բարեկեցության մակարդակը։

МАТЕРИАЛЬНОЕ СОСТОЯНИЕ РАБОЧЕГО КЛАССА АРМССР (1940—1960)

Г. М. АРУТЮНЯН

Резюме

Рост экономики и национального дохода послужил основой осуществления крупных и эффективных мер по дальнейшему подъему материального благосостояния уровня жизни народа. Итогом их проведения явилось сокращение рабочего времени, увеличение реальных доходов трудящихся. Коренным образом улучшилось пенсионное обеспечение рабочих и служащих. Возросли выплаты и льготы, получаемые населением из общественных фондов потребления. Широкий размах приняло жилищное строительство. Значительно повысилось потребление населением продуктов питания, улучшилась его структура.

Несмотря на эти успехи, в рассматриваемый период все еще существовало много нерешенных проблем, связанных с повышением материального состояния народа.